

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԼՈՅՍ ՀԱԻԱՏՔԸ

Տեստրակը յառաջ կը բերէ նաև Աւետարանի հետեւեալ խօսքերը. «Սի. մոն, Սիմոն՝ ահա Ստտանայ խնդրեաց զքեզ խարբալել իբրև զցորեան, այլ ես աղաչեցի վասն քո, զի մի՛ պակասեսցին հաւատք քո, և դու երբեմն դարձցիս և հաստատեսցես զեղբարս քո» (Ղկա. ԻԲ. 31-32): Մեր Աւետարանին զեղբ. փոխելով և զձեզ ընելով (Տպագր. Զօհրապեան, Հատոր Դ., էրես 172) իրաւունք կը կարծէ ունենալ վրայ բերելու, «Ստտանան պիտի խարբալէ Կաթողիկոսներ, Պատրիարքներ, Եպիսկոպոսներ, Հովիւներ, Վարդապետներ և Ոգգեր. մի միայն Պետրոս և անոր յալորդները ի հաւատս հաստատուն պիտի մնան միշտ»: Բայց ա՛յն է արդեօք Աւետարանին պատմածը և Քրիստոսի ըսածը. — Վերջին ընթրիքի սեղանին շուրջն է Յիսուս իր աշակերտներով, ու կը խօսի իւր չարչարանաց վրայ, և ահա աշակերտները անգամ մ'ալ իրար կ'անցնին թէ ո՞վ պիտի ըլլայ իրենց մէջ մեծը: Յիսուս այս անգամ ալ կը մերժէ այն զաղափարը, ամենուն հաւատար լինելը կը յայտարարէ և նոյն իշխանութիւնը կու տայ ամենուն. — «Նստիցիք յերկոտասան աթոռ, դատել զերկոտասան ազգ իսրայելի» (Ղկա. ԻԲ. 30): Տասներկուքին աթոռները հաւասար են, ո՛ւր է Պետրոսի աստիճանի աթոռը: Իսկ Պետրոսի ուղղուած խօսքերը յայտնապէս Պետրոսի ուրացութեան գուշակութիւնն են: Քրիստոս կ'ըսէ. «Ստտանան ու. զեց քեզ ցորենի պէս մաղէ անցնել»: Բայց եթէ ձեզ ալ ըսած ըլլայ, ո՞չ ապաքէն Պետրոսն ալ խարբալուածներէն մէկն է: Եւ իրօք ալ նա եղև բուն փորձութիւնը կրողը և փորձութեան մէջ տկարացողը, զի նա միայն ուրացաւ իւր Տէրը, և ո՛չ թէ միւս Առաքեալները: Միայն թէ Քրիստոսի աղօթից զօրութեամբ Պետրոսի ուրացութիւնը տեւական չպիտի լինէր. «Այլ ես աղաչեցի վասն քո զի մի՛ պակասեսցին հաւատք քո»: Քրիստոս չ'ըսեր թէ ամենուն հաւատքը պիտի խախտի և քու հաւատքդ անփորձ պիտի ըլլայ, այլ կ'ըսէ, Ուրացութեամբ քու հաւատքդ պիտի խախտի, միայն թէ անոր մէջ տեւական չպիտի մնաս և կորուստի չպիտի մատնուիս, այլ պիտի դառնաս, և քու դարձովդ եղբայրներուդ շինութիւն պիտի ըլլաս, որք ուրացութեանդ պատճառաւ պիտի գալթակդին քու վրայ: Այս իմաստով Քրիստոս կ'ըսէ, «Եւ դու երբեմն դարձցիս և հաստատեսցես զեղբարս քո»: Նա կը դառնայ որ սխալած է, դարձովը Պետրոսն է, ապա սխալողն ալ Պետրոս է: Իրօք ալ Պետրոս ուրացութեամբը աշակերտութեան պատիւէն իսկ ինկած եղաւ. և հրեշտակն ալ յարութեան աւետեաց մէջ Պետրոսը աշակերտներուն դասէն դուրս ձգեց, և աշակերտներէն ետքը առանձինն յիշեց (Մրկ. ԺԶ. 7), մինչև որ Պետրոս երիցս սիրոյ վկայութեամբ երիցս ուրացութիւնները քաւեց, և վերստին առաքելութեան և հովուութեան իշխանութիւնը ստացաւ (Յովհ. ԻԱ. 17): Եւ ըսե՛լ թէ Պետրոսի պատիւութեան մի գործը, Պետրոսի մեծութեան փաստ՝ և Պետրոսի սխալիլը, նորա անսխալութեան կը դառնայ, Աւետարանը իրենց քմաց ծառայեցնողներուն ձեռքը:

Ոչ միայն Աւետարանը այսպէս կը վարդապատէ, այլ նաեւ Պօղոսի եւ Պետրոսի բոլոր թուղթերը ընդհանուր Եկեղեցւոյ գլուխ ու հիմ կը նկատեն զՔրիստոս, և ո՛չ զայլ ոք. բոլոր Եկեղեցիք միացած են մէկ հոգով՝ այդ զըլ-
խոյն իշխանութեան տակ։ Բայց Առաքելական այս վճիռ բացատրութիւններուն ալ սխալ մեկնութիւններ տրուած են։ Տեսարակը կը գրէ. Եթէ Հռովմայ Բա-
նայապետները ճանչնալ իբրեւ Եկեղեցւոյ գլուխ՝ և հաւատոյ վերաբերեալ
ինդիքներուն մէջ իրենց հնազանդութիւնը՝ Լատինականութիւն է։ Քրիստոսի
եկեղեցին և անոր շաստաւանուն շտապող մի ըլլալու չեն, ինչպէս որ Աստուծո
հրամայած է, և իւր Առաքեալը Պօղոս կը քարոզէ. «Աի է Տէր, մի հաւատք,
մի մկրտութիւն»։ Սակայն հաւատքի սիւնքեան կեդրոնը Առաքեալէ մը և Հայ-
րապետէ մը շտա բարձր է, զի ինքն Քրիստոսն է որ առնիքը ի մի կը զօդէ.
ամենուն գլուխը նա է։ Քրիստոսի հետեւողներ գիտեն թէ Անոր սեփականու-
թիւնն են, որովհետեւ Անոր արիւնով զնուած են. ամէնքը «մի են ի Յիսուս
Քրիստոս», ինչպէս Առաքեալը կը վկայէ։ Իսկ Առաքեալները՝ այդ հաւատքին
սխալեաններն և քարոզիչներն և ուսուցիչներն են. միայն Պետրոսը չէ, և ո՛չ
ալ միայն անոր յաջորդները, այլ ամբողջ Առաքեալները և անոնց ամենուն յա-
ջորդները. «Ընդհանրապէս զիս Հայր և ես առաքեմ զձեզ, զնացէ՞ք այսու
հետեւ աշակերտեցէ՞ք զամենայն հեթանոսս, մկրտեցէ՞ք զոոսս յանուն Հօր
և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Ասուցէ՞ք նոցա պահել զամենայն որ ինչ պատուի-
րեցի ձեզ. և անհաւաստի ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած
աշխարհի» (Մատթ. ԻԸ. 18—20)։ Այս խօսքերէն յետոյ հնա՛ր է տակաւին Ա-
ռաքեալները և առաքելութիւնը շնչել, և Քրիստոսի առանձնաշնորհեալ միակ
փոխանորդ մը երեւան բերել, և անոր միայն տալ հաւատքի պաշտպանութիւնը։
Կ'երեւի թէ այդ գրողը չէ հասկցած թէ Առաքեալները ինչպէս կ'ըմբռնէին
Քրիստոսի հաստատած Եկեղեցին, և անտեղեկ է Պօղոսի և Պետրոսի (Աստու-
ծաբանութենէն և Քրիստոսաբանութենէն). բայց Պօղոս, հեթանոսաց Առաք-
եալը, կը քարոզէ և կը յորդորէ իրեն հետեւողները որ խաբեբայ մոլորեցուցիչ-
ներէն հեռու կենան։ Եկեղեցին մարմին մ'է ըստ Առաքելոյն բացատրութեան
նորէն հեռու կենան։ Եկեղեցին մարմին մ'է ըստ Առաքելոյն բացատրութեան
նորէն հեռու կենան։ Եկեղեցին մարմին մ'է ըստ Առաքելոյն բացատրութեան
նորէն հեռու կենան։ Եկեղեցին մարմին մ'է ըստ Առաքելոյն բացատրութեան

Ս. Գիրքէն գատ կան Եկեղեցւոյ պատմութիւնը, Ս. Հայրերուն գրութիւններն և Վարդապետաց շատազովութիւնները, որոնք ներկայացուցած են Եկեղեցին շատ որոշ կերպով և ամէն բան պարզած ու լուսարանած են, Առաքելական դարը, որուն սկզբնական վիճակը ներկայացնողը Առաքելոց պրակներն են և առաջի դարերու շատազովութիւններն ու մեկնութիւնները, կը ցուցնեն յայտնապէս թէ Պետրոս, Հռովմայ Եկեղեցւոյն իրեն սեպհականել ուզած Առաքելը, ունէ առանձնաշնորհեալ դիրքի տիրացած չէ, և միշտ Առաքելոց համահաւասար վիճակ մ'ունեցած է։ Յակոբոս Տեառնեղբայր աւելի ազդեցիկ դիրք ունի Առաքելոց մէջ՝ քան Պետրոս Առաքելը։ Առաքելական ժողովոյն մէջ, որ Եկեղեցւոյ առաջին ժողովն է, Պետրոս երկրորդական վիճակ ունի, Յակոբոս Տեառնեղբայրն է որ իբրև նախագահ ժողովոյն փակումը կ'ընէ և ամէնքը կը հաւանին անոր խօսքերուն (Գործք, ԺԵ. 13)։ Մատթիայի ընտրութեան ատեն Առաքելները ի միասին են (Գործք, Ա. 23), և եօթը Սարկաւագաց վրայ ամէնքը ի միասին ձեռք կը դնեն (Գործք, Զ. 2), եթէ Պետրոս անոնցմէ տարբեր և անոնցմէ վեր պետ մը լինէր, անշուշտ անոր միայն պիտի վիճակէր այս գործերը կատարել։ Պետրոս միւս Առաքելոց նման կ'երթայ քարոզելու, նախ ի շրջակայս Երուսաղէմի և ապա Անտիոք, ուր Պողոս կը քարոզէր և ի հարկին Պետրոսն ալ կը յանդիմանէր (Փաղ. Բ. 14)։ Ըստ աւանդութեան զոր կ'ընդունին Հռովմէականք, հոն աթոռ հաստատելէն վերջ կը մեկնի ի Հռովմ։ Ուրեմն Անտիոք իրաւունք ունէր Պետրոսի նախնական աթոռը լինելու, և ինչ իրաւունք որ Հռովմայ Եպիսկոպոսը կը կարծէ ժառանգել Պետրոսէ, աւելի նախնական իրաւամբ պէտք էր ժառանգած լինէր Անտիոքայ Եպիսկոպոսը։ Բայց Անտիոքայ Հայրապետներ իբրև Պետրոսի յաջորդներ չ'առաքելեցին ընդհանուր Եկեղեցւոյ պատն համարուիլ, մինչև միջնադարեան ժամանակներուն ծագեցաւ այդ գաղափարը։ Նախկին Հայրապետք ոչ միայն Անտիոքայ՝ այլ և Հռովմայ, լաւ գիտէին թէ Առաքելները ամէնքն ալ հաւասար իշխանութիւն ունէին, և մին քան զմիւսն առաւելութիւն չ'ունէր։ Կը թողունք մանրամասնել այն կէտերը զոր մի առ մի մեր առջև կը դնեն Եկեղեցւոյ պատմութիւնն ու աւանդութիւնը։ Միայն հակիրճ կերպով յիշեցնենք թէ ընդհանուր Եկեղեցւոյ բոլոր հին Հայրերը ամէնքն ալ մեր ցուցած ողջամիտ մեկնութիւնը առած են Աւետարանական և Առաքելական բացատրութեանց, զոր օրինակ Արևելեան Եկեղեցւոյ Հայրերէն, Եւսեբիոս Կեսարացի, Աթանաս Ալեքսանդրացի, Բարսեղ Կեսարացի, Յովհան Ոսկեբերան, Գրիգոր Նիւսացի, Գրիգոր Աստուածաբան, Կիրեղ Աղէքսանդրացի, և Արևմտեան Եկեղեցւոյ Հայրերէն, Տերտուլիանոս Ափրիկեցի, Կիպրիանոս Կարճեղոնացի, Ամբրոսիոս Մեդիոլանցի, Օգոստինոս Հիպոլոնացի և ուրիշներ, որոնց վկայութիւնները ամէն առձեռն գիրքերու մէջ հաւաքուած կը գտնուին։ Ասոնք ամէնքն ալ իրենց պրուածոց մէջ վէմ բառով Քրիստոսը և Քրիստոսի Որդի Աստուծոյ կենդանւոյ լինելուն դաւանութիւնը կը հասկնան և ոչ թէ Պետրոսի անձը, իսկ Հռովմայ Հայրապետը ընդհանուր Եկեղեցւոյ միակ զուլի նկատած չեն, այլ միայն Առաքելական աթոռոց գահակալներէն մէկը, նման միւս Հայրապետական աթոռոց գահակալներուն։ Նախկին Եկեղեցւոյ Ս. Հայրերուն քարոզածն այս է, և իրենց գրութիւններն ու բացատրութիւնները անփոփոխ փաստեր են։

Ս. Գրիգորի Հռովմ երթալը, որովհետև պատմական օտոյոյ պարագաներ և ճշգրիտ ժամանակագրութիւններ մեզ չեն ներեր որ այդ տեսակ սխալ ենթադրութիւններ ընենք: Հոգ չէ որ տառնց քննադատութեան մեր պատմիչներէն մի քանին այս կտորը իրենք ալ կրկնած են, և նոյն իսկ ստայօդ և անվաւեր 'Իսւանց Թուղթը այս կտորին վրայէն ներշնչուած է: Ոչ միայն նշանաւոր օտարներ այդ գրութեան անվաւեր լինելը կը հաստատեն, այլ նոյն իսկ Վիեննայի և Վենետիկի Մխթարեան բանասէր վարդապետներ անոր կեղծ լինելը ապացուցած են: Տեսարակը Ս. Գրիգորի Հռովմ գնացած լինելուն իբրեւ աղբիւր Ազաթանգեղոսէն զատ կը ներկայացնէ Խորենացոյ պատմութիւնն ալ (Բ. 'Կարոթեան Զ. 'Կուրիը) բայց այնտեղ Ս. Գրիգորի Հռովմ երթալու մասին բան մը գրուած չկայ:

Իսկ Գրիգոր Տղայէ յառաջ բերած վկայութիւնը չէ կարելի հաստատուն հիմն ընել. Ս. Գրիգորի Հռովմ երթալուն և ձեռնադրութիւն ստանալուն ակնարկը ոչ այլ ինչ է, եթէ ոչ օրինակ տալ թէ՛ ինչպէս նախկին Եկեղեցոյ Հայրապետները իրարու հետ սիրով և միաբան էին և ոչ թէ՛ ինչպէս Հայոց Հայրապետութիւնը հիմնուեցաւ. «Միթէ ամբարտաւանեա՞ց այսու ամենայնիւ, և կամ բաւական համարեցա՞ւ անձին իւրում զայս պատիւ աստիճանի, և կամ թէ ո՞չ խնարհ սրտիւ և աներկբայ մաօք էաւ յանձն գնալ ի Կեսարիա, և դարձեալ ի Հռովմ, և առեալ ձեռնադրութիւն ի Սրբոյն Սեղբեստրոսէ, և կամ թէ իւրքն ամենայն ո՞չ կացին ի նոյն միաբանութեան սէր, և ո՞չ չոգաւ Արիստակէս ի Ժողովն Նիկիոյ» (էջ 74): Առաջին անգամն է որ Սեղբեստրոսեան ձեռնադրութեան յիշատակութեան մը կը հանդիպինք, որ երկուսասաներորդ դարէն առաջ ապրող ոչ մէկ պատմիչի մէջ չկայ, և երկուսասաներորդ դարուն զրոյր չորրորդ դարուն համար վկայ չէ: Այդ պարագայն կը յիշեցնէ 'Իսւանց Թուղթն, որ այն ատեններն երևան ելաւ և առ ժամանակ մի ընդունելի դատուեցաւ: Ամէն պարագայի մէջ Գրիգոր Տղայի այդ խօսքերը Հայրապետական կազմութեան գաղափարը չեն տար, այլ պարզ ձեռնադրութեան խօսքը կ'ընեն, զոր ու է աթոռոյ Եպիսկոպոսը ուրիշ աթոռի մը վրայ բարձրացողին կրնար տալ: Հռովմայ Եպիսկոպոսներն ալ Ոստիոյ Եպիսկոպոսներէն իրենց ձեռնադրութիւնը կ'առնէին, ինչպէս նաև Կոստանդնուպոլսոյ աթոռոյն պետերն ալ Հերակլիոյ Եպիսկոպոսներէն: Բայց տակաւին Գրիգոր Տղայի այդ խօսքը իւր պարզ իմաստովն իսկ չէ կարելի ընդունիլ իբրև ստոյգ իրականութիւն, որովհետև պատմականօք չէ, և Կեսարիոյ մէջ Ղևոնդիոս Եպիսկոպոսէն անգամ մը ձեռնադրուած Եպիսկոպոսը կամ Հայրապետը պէտք չունէր այլ ևս նորէն ձեռնադրուիլ: Զայդ կը զգայ տետրակին հեղինակն ալ և առնուլ ձեռնադրութիւն բառերուն քով փակագիծի մէջ Կաթողիկոսութեան բառը աւելցուցած է, որով անգամ մի ևս Եկեղեցական կարգաց անտեղեակ լինելը կը շեշտէ, զի Հայ Եկեղեցին է միայն՝ որ այժմ իւր Կաթողիկոսը կը ձեռնադրէ և կ'օծէ, իսկ ուրիշ Եկեղեցիք՝ ոչ, և նոյն իսկ Լատին Եկեղեցին իւր Պապը լոկ Եպիսկոպոսական ձեռնադրութեամբ կը թողու: